# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
## 04.09.2014թ. ԿՆՔՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ N ԴԴ-ԾՀԾՁԲ-11/9-03-238 ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան «26» դեկտեմբերի 2014թ.

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն՝ ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Այ Սերվիս» ՍՊԸ -ն, ի դեմս ընկերության տնօրեն Մ.Ջալավյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 04.09.2014թ. կնքված N ԴԴ-ԾՀԾՁԲ-11/9-03-238 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.3 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պայմանագրի 4.1 կետում «**950 000 (ինը հարյուր հիսուն հազար)** ՀՀ դրամ» բառերը փոխարինել «**1140000 (մեկ միլիոն մեկ հարյուր քառասուն հազար)** ՀՀ դրամ» բառերով:

1.2 Պայմանագրի N1 հավելված հանդիսացող «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ում համապատասխան բոլոր մասերում «Ծառայության մատուցման ընդհանուր ժամկետն է՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 31-րդ աշխատանքային օրվանից մինչև 2014թ. դեկտեմբերի 26-ը ներառյալ» բառերը փոխարինել «Ծառայության մատուցման ընդհանուր ժամկետն է՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 31-րդ աշխատանքային օրվանից մինչև 2014թ. դեկտեմբերի 30-ը ներառյալ» բառերով:

1.3 Պայմանագրի N2 հավելված հանդիսացող վճարման ժամանակացույցը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված N1-ի:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի N 1 հավելվածը հանդիսանում է համաձայնագրի անբաժանելի մասը:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
***«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ***
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151, 900011192052
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլադյան

(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
***«Այ Սերվիս» ՍՊԸ***
Հասցե՝ ք.Երևան, Հ.Հակոբյան 3/14
ՀՎՀՀ՝ 00124361
Հ/Հ՝ 205002236771
«Ինեկոբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Մ.Ջալավյան

(ստորագրություն)
Կ.Տ.

"АЙ СЕРВИС"
"I SERVICE"
00124361

Հավելված 1
04.09.2014թ. կնքված N ԴԴ-ՇՀԾՁԲ-11/9-03-238 պայմանագրի
26.12.2014թ. կնքված համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| N | Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2014թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| **Ծրագիր՝ 03 03 01 05՝ ՀՀ դատարանների պահպանում** | | | | | | |
| 1. | Սարքերի և սարքավորումների սպասարկման ծառայություններ | 475000 | 950000 | 950000 | 950000 | **950000** |
| **Ծրագիր՝ 03 03 01 04՝ ՀՀ դատարանների պահուստային ֆոնդ** | | | | | | |
| 1. | Սարքերի և սարքավորումների սպասարկման ծառայություններ | — | — | — | 190000 | **190000** |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

***«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ***
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151, 900011192052
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Ղեկավար՝ Գ. Փոլադյան

(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

***«Այ Սերվիս» ՍՊԸ***
Հասցե՝ ք.Երևան, Հ.Հակոբյան 3/14
ՀՎՀՀ՝ 00124361
Հ/Հ՝ 205002236771
«Ինեկոբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Մ.Ջալավյան

(ստորագրություն)
Կ.Տ.